թեան, եւ աղբիւրք[1] հոգեւոր[2] իմաստութեան Հայաստան աշխարհիս[3]: *24* Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ, եւ խաղաղութիւն բազում եւ շինութիւն հաստատութեան բազում եկեղեցեաց ի նոցանէ տացի[4], բազում յաղթութեամբ եւ մեծաւ զաւրութեամբ. եւ բազում[5] մոլորեալք եւ անգէտք դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան. որովք եւ Քրիստոս բազում լեզուաւք փառաւորեսցի նոքաւք: *25* Որք սիւնք եկեղեցւոյ լինիցին, եւ մատակարարք բանին կենաց, եւ հիմունք հաւատոյ, պաշտաւնեայք Քրիստոսի եւ արբանեակք Հոգւոյն Սրբոյ. զի ուստի հիմն իցէ շինուածոյն, եւ կատարումն[6] անտի լինիցի: *26* Եւ բազում տունկք[7] պտղաբերք եւ շայեկանք եւ աւգտակարք հոգեւոր դրախտին ի նոցա մշակութեան աջոյն տնգեսցին եւ ընկալցին աւրհնութիւն յԱստուծոյ:

27 Իսկ որք[8] ոչն կամիցին տնկել նոքաւք, եւ ի նոյն[9] հոգեւոր ցաւղոյն գիտութեան ըմպել, խոտան լիցին՝ մերձեալք[10] յանէծս. եւ վաղճան նոցա լիցի այրումն[11] հրոյն: *28* Բայց բազում անգամ վասն Տեառն լինիցին նոքա ի հեռ եւ ի նախանձ յանարժանիցն[12]. այլ կացցեն ի հաւատս[13] անշարժ իբրեւ զվէմ, եւ յաղթեսցէ նոցա համբերութիւն բազում: *29* Եւ յետ նոցա թագաւորեսցէ ստութիւն, յապարասան յանձնասէր եւ յարծաթասէր ի մտախաբ յանպատսպարան յանպիտան[14] ի սուտակասպաս[15] եւ ի բանսարկու մարդկանէ. եւ ապա եթէ[16] ոք գտցի՝ որ կարասցէ ունել զուխտ[17] հաստատութեան հազիւ հազիւ:

30 Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, մխիթարութեամբ մեծաւ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, որ արժանի արար զնա այս-

1 *Գ, Դ* աղբիւրք
2 *Դ չունի՝* հոգեւոր
3 *Դ* աշխարհին
4 *Բ* ի Տեառնէ նոցա տացի. *Գ, Դ* տացի նոցա ի Տեառնէ
5 *Դ* բազումք
6 *Ա* կատարն
7 *Դ* տանի
8 *Դ* որ
9 *Դ չունի՝* նոյն
10 *Ա* մերձեալ
11 *Բ, Դ* յայրումն
12 *Բ, Գ* յանարժանացն
13 *Բ, Գ* ի հաւատսն
14 *Ա յաւելու՝* եւ
15 *Դ* սուտակ
16 *Բ, Գ* թե
17 *Բ, Գ, Դ* զխորհուրդ